Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԲԱՄԲԱԿԻ ՖՐՈՆՏՈՒՄ

Վաղարշապատ:

Գլխավոր փողոցի աղմուկն ու փոշին ավտոների, սայլերի, կառքերի եռուզեռն զգացնում էր «ֆրոնտի» մոտիկությունը: Մոբիլիզացիա է ուժերի: Արդեն ճակատամարտ է:

Այնպես որ, այդ երևութական աղմուկն ու իրարանցումը նյարդայնացնում են:

Անգամ սրտնեղություն է պատճառում խեղդվող ռադիոն: Ի՞նչ լավ կլիներ, եթե նա մի բան միայն ասեր բամբակացան շրջաններում.

«Դեպի դաշտ և ուրիշ ոչինչ»:

Ահա և բամբակի արտերը: Աջ ու ձախ փռված են նրանք: Հազիվ միայն երևում են հեռվում հավաքողները. . .

Առաջին իսկ տպավորությունն այն է, որ բամբակի հավաքումն ինտենսիվ չէ:

Վերին Խաթունարխ:

Ամենաառաջին ընծան— կոլտնտվարչության գրասենյակի առաջ միս են մորթում: Դա վատ չէ, դա բրիգադի համար է: Այնտեղ խոհանոցն է: Մեկը մորթում է, և որովհետև աշխարհիս երեսին լինում են մարդիկ, որոնք այն կարծիքին են անձնապես, որ միսն ավելի հաճելի երևույթ ունի, քան բամբակը, ուստի և մորթողը շրջապատված է հանդիսատեսներով: Սրանց անդորրը խռովում է անախորժ կառքը, որն անքաղաքավարի կանգ է առնում նրանց մոտ: Մորթողը կռանում է և առվի մեջ լվանում է ոտները:

— Դո՞ւք ինչու չեք գնացել չանաքի:

— Համարյա թե գնում եմ:

— Բայց ինչու՞ չեք գնացել մինչև հիմա:

— …Մի քիչ հաց կար թխելու, ցորենը տարել են ջաղաց, տանեցիք էլ դրա խաթրու ետացել են… համարյա թե. . .

Մի կես ժամ հետո երևաց ապացույցը, մի սայլ, վրան միայն մի պարկ ալյուր, հետը մի պատանի, տանեցիքն էլ տանը…

Կոմենտարիաներն ավելորդ են:

— Չանաքը ծանդր բան ա, մենք կարա՞նք դրա պես հազար անգամ կզվել-դզվել,— ասում էր մի գյուղացի:

Եվ ահա այս «ծանր ու թեթևի» ուրույն «փիլիսոփայությունն» իր բազմաթիվ բազմերանգությամբ տալիս է կոնկրետ հետևանք: Վերին Խաթունարխի դաշտերում պեյզաժն աշխուժացնողը կանայք են: Նրանք են մեծամասնությունը : Խոսքը դրսից եկած բրիգադների մասին չէ:

Բոլորովին հակառակ պատկեր է Ներքին Խաթունարխում: Այստեղ առաջ է եկել բեկում: Կոոպերատիվը, արհեստանոցները փակ են, բոլորը գնացել են դաշտ:

Գնում ենք դաշտ: Ահա և հավաքողները: Սա արդեն ֆրոնտի կրակի գիծն է:

Մոտենում եմ երկու ծերերի, մեկը կին, մեկը տղամարդ:

— Բարև՛, հայրիկ:

— Բարով ես եկել:

Եվ առույգ դեմքի խորիմաստ աչքերով նայում է ինձ ու թեթև ժպտում: Կարմրել է աշխատանքից և աշնան արևից: Շտկվում է:

— Աշխատո՛ւմ ես, հայրիկ:

— Բա ի՞նչ, ութանասուն տարի աշխատում եմ: Մենք սովոր ենք աշխատանքի:

Ու վարժ մատներով արագ-արագ պոկում է բամբակը, ածում գոգնոցը:

Նրա կողքին քաղում է մի պառավ կին: Նա խոսում է հաճույքով և երևում է, որ գոհ է իր աշխատանքի արդյունքից, որովհետև նորման կատարում է, վերջն էլ հայտնում է և հայտնում առանձին շեշտով:

— Տղես բրիգադիա է:

Բրիգադը ցրված է դաշտում և եռանդով չանաքում է:

Ծիծաղ, կատակ խառնվել են իրար: Աշխատանքային դարը նոր երևույթ է առաջացրել, կրթում է, թեև մի փոքր դժվարությամբ, բայց կրթում է:

Խոսում ենք հարվածայինների հետ, որոնց, ի միջի այլոց, հեշտ է ճանաչել հենց սկզբից: Եվ հեռանում ենք:

Մի փոքր անց Շոռլու թուրք գյուղումն ենք, գյուղխորհրդի գրասենյակում:

Տիրադեմ գյուղխորհրդի նախագահը և արագախոս կոլտնտնախագահն ուրիշ երիտասարդների հետ շրջապատում են մեզ:

Սկսվում է հարցուփորձը, որ երբեմն փոխվում է նաև զրույցի:

— Շախթան. . .

— Բամբակը դուրս չի գալիս. . .

— Եվ այլն, և այլն:

— Այդպես չի՞,— դառնում է գյուղխորհրդի նախագահը կոլտնտնախագահին:

Սա հաստատում է: Մյուսներն էլ հաստատում են:

Եվ տխուր նախագահը հորանջում է:

Շոռլուն իրոք կրում է ցրտահարության հետևանքները, բայց ոչ այն չափով, որ չկարողանա ավելի հավաքել:

Հարվածայնության փայլուն դրվագներ կան: Սաքինա Կասմովան չանաքել է օրական 60—70 **կիլո**: Նույնը և Մահմադ Իսմայիլ օղլին. 40,36,45,31: **Կանայք դուրս են գալիս աշխատանքի:**

Կոոպերատիվում ապրանք կա: 14 ձի, 5 սայլ, 2 ֆուրգոն, 1 տաչկա: Բժիշկ, քույր: Եվ վերջապես մանկամսուր: Շատ ժամանակ չի անցել այն օրից, որ ոչ ոք իր երեխան չէր տալիս մսուր, վախենալով որ նրանց **«Ամերիկա պիտի տանեն…»**:

Երբ ներս մտանք մանկամսուրը, երկու կին բաց երեսով դիմավորեցին մեզ, երեխաները գրկներին: Դրանք կուսակցականների կանայք էին: Մսուրը մաքուր էր, լուսավոր, երեխաները գեղեցիկ, առողջ:

Իհարկե բամբակը թույլ չի տալիս ինձ նյութից շեղվելու, բայց երբ մտածում ես ի՜նչ փոփոխություն կա թուրք գյուղում:

Խոհանոցը՝ կոլտնտեսականների. . . ամանները, սեղանները, անգամ խոհարարի շապիկը մաքուր:

«Հարվածային ընկերներ, դեպի դաշտ» — ասում է դռան վրայի լոզունգը:

Այո, դեպի դաշտ՝ կռվելու. . . ո՛չ եղբայրակից ժողովրդի աշխատավորական մասսայի հետ, այլ բնության դեմ, բամբակի համար:

Բայց ահա պատի տակ նստած է հանդապահը և հանդարտ մտիկ է տալիս բամբակի արտին, որի մեջ հորթեր են մտել:

Ամբողջ այցելության ընթացքում երևաց, որ անասունները բնավ էլ դեմ չեն բամբակին. . . ուտելու:

Հետևյալ Կարաղշլաղ գյուղը աղմուկ է ու աշխույժ եռուզեռ: Երևանից եկել է Առժողկոմատի բրիգադը, 90 հոգի: Դաշտը լցվել է նրանց շարքերով: Գյուղի կոլտնտեսականների հետ չանաքում են բամբակը: Ամբողջ օրը հաց չեն կերել: Երեկո է արդեն: Ու մինչ նրանք չանաքում են՝ մեզ շրջապատում են թուրք կոլտնտեսականները:

— Հաշվետարը 15 օր է հաշիվ չի տալիս:

— Աշխգրքույկները 20—25 չեն գրած:

— Կալեթ չկա, կրուպա չկա:

Աշխատանքը վերջացել է արդեն, և բրիգադիրները, թուրք կոլտնտեսականների հետ միասին, դուրս են գալիս արտից:

Ստացվում է մի ստվարախիտ շարան, որ կռվի դաշտից վերադարձող վաշտի պես հեռանում է դիրքից հաղթական քայլերով:

Կողքի արտում մի մարդ է կանգնած—իր արտի միակ չանաքավորը: Մենատնտես է: Նա տեսնելով խմբին՝ սկսում է զվարճալի տոնով երգել:

Նրան պատասխանում է խմբի խրոխտ երգը, որ հնչելով մտնում է գյուղ, դեպի ճաշարան և գիշերելու սենյակները. . . կուլակի տներում, որ գրավված են:

Բերքահավաքի ամբողջ իրականությունը, նրա ներքին հնարավորությունները,

պոտենցիան

միանգամայն հնարավոր են դարձնում ուժեղ, վճռական բեկում առաջացնելու և պլանները կատարելու:

Սակայն դեռ անցնենք մեր տպավորությունների թռուցիկ շղթային:

Կառքը մտնում է Վերին Թուրքմանլու: 21 թվի վերաբնակներ են, բամբակի գործով նոր են զբաղվում:

Ջանադիր շրջագայությունն ամբողջ գյուղում հայտաբերում է մոտավորապես 70—80

բարդան

բամբակ, որ իրենք տերերն են ցույց տալիս հաղթական շեշտով:

— Բայց ինչո՞ւ չեք տանում հանձնում. . .

— Մեկ չէ՞, էսօր-էգուց, վերջը պիտի հանձնե՜նք. . .

— Ո՛չ, ընկերնե՛ր, պետք է իսկույն հանձնել. դա մեծ նշանակություն ունի:

Համաձայնվում են:

— Օրենքով ամեն առավոտ սել պիտի դնել տանել,— ձևակերպում է մեկը:

Խոսում են ծիծաղով, կատակով, զգացվում է բարեկեցիկությունը, կոոպերատիվում ապրանք կա: Եվ ահա կոոպերատիվի **շաքարի** տոպրակների վրա նստոտած խումբը (որը, ի միջի այլոց, կարող էր դաշտում լինել այդ րոպեին) սկսում է քաղցր զրույցը: Կոլեկտիվ տնտեսության, պրոգրեսիվ գործավարձի, և այլ հրատապ խնդիրների մասին: Պարզվում է, որ շարժումը դեպի կոլեկտիվ տնտեսություն կարող է մեծ հաջողություն ունենալ այս գյուղում, բայց բացակայում է կազմակերպչական աշխատանքը:

— Սկզբից այդպես չհաշվեցին,— ասում է մի մենատնտես, երբ իրեն բացատրվեց գործավարձային սիստեմը:

Նա դիմում է տվել արդեն: Եվ բարձրացնելով բազուկը հայտարարում է. «մինչև էս բիլակը չաշխատի՝ հաց չի ուտի»:

«Ո՛չ մի կիլո բամբակ դաշտում»— գրված էր պատի թերթում:

Եվ ակամա ավելացնում ես **«. . . Այլև տներում, բարդանների մեջ»:**

Այդպես է Վերին Թուրքմանլուի տեմպը:

Ներքին Այնալու: Ճանապարհի երկու կողմը սփռված են բամբակի հասուն արտերը: Չեն սփռված միայն մարդիկ: Տեղ-տեղ անասուններ են երևում, որոնք իրենց սրտում երկյուղ չունենալով. . . գյուղի լիազորից, խաղաղ ճարակում են բամբակը:

Մի կերպ գտնվում է գյուղի լիազորը, որին հաղորդվում էմեր անձնական կարծիքը անասունների աջակցության մասին բերքահավաքի բնագավառում:

— Անասուն չկա, կարգադրել ենք:

— Լավ, ինչքա՞ն է ձեր գյուղի ցանքն այս տարի:

Լիազորը չգիտե:

Չես իմանում ընկած է ինքնահոսի մե՞ջ, թե՞ հենց ինքն է ինքնահոսը: Երբ նկատողություն է արվում այդ առթիվ, լիազորը մինչև անգամ նեղանում է:

— Ամենքը մեր գեղն են գովում, իսկ դուք խայտառակում եք:

— Ապա ինչո՞ւ եք բամբակը թողել դաշտում:

— Չի բացվում:

— Ապա ինչո՞ւ մեր տեսածները բոլորը բացվել են:

— Քիչ-քիչ է բացվում: Կամաց-կամաց է բացվում: Ավելի շատը չի բացվում:

Գրասենյակում:

— Գյուղի ցանքի ընդհանուր տարածությունը՞:— 108 հեկտար:— Կոլտնտեսությա՞նը:— 16 հեկտար:— Որ՞քան պիտի տա գյուղը:— 1259 ցենտներ:— Կոլտնտեսությունն ինչքա՞ն է տվել:— 23 ցենտներ:— Մնացածնե՞րը:— Ընկեր Վարդանի մոտ է:—Ո՞րտեղ է ընկեր Վարդանը: Գնացել է Վաղարշապատ:

— Ախր այս բաներն օրը-օրին պիտի իմանաք, ընկե՛ր:

— Էդքան բանը ո՞նց միտս պահեմ:

Արագություն, հստակություն, համառություն— չես տեսնում այս գյուղերում: Եվ կարգադրողը, հրահանգողը, խորհրդատուն չեն կարողանում **իսկույն** կարգադրել, **կազմակերպել**, դրստել ծռված տեղը և արագ անցնել մյուս հազար ու մի խնդիրները պարզելուն: Խնդիրներ, որ կապ ունեն բամբակի հետ, ուղղակի կամ կողմնակի:

Հայ-Զեյվայում: Գրասենյակում գյուղի կատարածուն հավատացնում էր, որ՝ ուր բամբակը հասնում է՝ «վրա ենք ընկնում ու պոկում»: Պտտվեցինք դաշտերը բավական երկար: Դաշտերում լիքը բամբակ է:

Բայց չլինենք անարդար թե՛ այս գյուղի և թե՛ մյուսների նկատմամբ **ընդհանրապես**: Այստեղ ահա տեղին է նշել, որ **գնահատման հավասարեցումը** վատ է անդրադառնում գյուղի առաջամարտիկների, հարվածայինների և բոլոր ջանադիր տարրերի վրա:

Շրջելով բամբակացան շրջանները և ծանոթանալով ամբողջ կամպանիայի մանրամասնություններին, ավելի ցայտուն և հասկանալի է դառնում, թե ինչու հարկավոր է քաջալերել և առաջ քաշելով **հայտնի դարձնել հարվածայիններին:**

Հարվածայինն (ամենուրեք) այն կոնկրետ ապացույցն է, որ բամբակի ֆրոնտում, չնայած «ուշ ցանքին», «ցրտահարությանը», «ուշ բացվելուն» և հազար ու մի «օբյեկտիվ» պատճառներին, հնարավոր է 7, 10, 12 կիլոյի տեղ օրական քաղել 50, 60, 70 կիլո:

Հարվածայիններ ամեն տեղ կային: Թե՛ «Անաստվածում», թե՛ Շոռլուում. . .

Հարվածայիններ կային թե՛ երիտասարդների մեջ և թե՛ հասակավորների, անգամ ծերերի մեջ:

— Լոդըրը քա՞նի կիլո է,— հարցնում եմ մի գյուղացու:

Անմիջապես հասկանում է.

— Լոդըրը 8, 10, 13 կիլո է, իսկ հարվածայինը՝ 50, 60, 70 կիլո:

Ահա գյուղի դիֆերենցիալ բնութագրումը:

Արդյոք լո՞ղըր են, թե՞ հարվածային Հայ-Զեյվայի կոմերիտական Հակոբ Հակոբյանը, Գուրգեն Մնացականյանը, որ չեն գնում աշխատանքի, և երբ իրենց հարցնում են պատճառը՝ պատասխանում են.

— Չեմ կարող:

Արդյոք կա՞պ ունեն որևէ «օբյեկտիվ» հանգամանքի հետ հարվածայիններ՝ Սաթիկ Հարությունյանը, Տալիսկա Գաբրիելյանը, կոմերիտական Սիրուշը, Տիգուշ Մխիթարյանը, Անահիտ Արիստակեսյանը, որոնք օրական չանաքում են 60, 65, 70 կիլո. . .

«Անաստված»-ցի Հուրիկ Ավոյանը ոչ մի օր չի բացակայել աշխատանքից: Նոյեմզար Հակոբյանը, հասակավոր կին, օրական չանաքում է 50—60 կիլո: Հարվածայինները շատ են, ո՞ր մեկը թվես: Կան և հարվածային գյուղեր. Մուղանջուղը, Դոխսը, Ֆրանգանոցը. . .

Ամբողջ կամպանիայի բոլոր կողմերն ու ծալքերը դիտելիս շարունակ մի միտք է հետապնդում քեզ: Թե որքա՜ն դեր են կատարում մանրամասնությունները: Այդ «չնչին» «մանրակրկիտ» օղակները: Ահա ավտոմոբիլը խփել է գնման կայանի կշեռքը կոտրել, մյուսն էլ փչացած է (4-ից 2-ը չեն գործում): Եվ սայլերը կուտակված են գնման կայանի դռանը: Այնտեղ բակում տեղ չկա սայլերի համար, պետք է հերթ պահել: Հերթն ստեղծվել է այդ կշեռքների պատճառով: Նյարդայնություն, դժգոհություն, գործից ուշացում: Մսուրը վատ է կամ չկա և ահա 45 մայր աշխատող ձեռք, մի կոլտնտեսության մեջ դաշտ չեն դուրս եկել: Հայ-Զեյվայի և թուրք-Զեյվայի մեջի կամուրջը վնասված է, և արտաբայի լիազորը չի կարողանում վերջին գյուղն **այդ օրն** այցելել, շտապում է ուրիշ տեղ: Մի տնտեսություն 2 բարդան

բամբակը դրել է տանը՝ սպասում է մյուս գործերը վերջացնի և ապա տանի, նրան հետևում են հարյուրավոր, հազարավոր տնտեսություններ, և օրերով բամբակը չի հանձնվում գործարանին:

Արտերում մասսայական երևույթ է դարձել անասունների արածումը: Մեկը, երկուսը, երեքը. . .

Գուցե և սրանք իսկապես «չնչին» բաներ են: Բայց հո չնչին չե՞ն գյուղխորհրդի նախագահը, կոլտնտեսության նախագահը, գյուղ-ակտիվը և այլն: Մի նախագահ որոշում է շատ անգամ իր գյուղի ահագին բերքահավաքի բախտը: Եվ գյուղի թերություններ շատ անգամ չնչին բաներից են կուտակվում ու դառնում մեծ քանակ: Երբ տեղն ու տեղը կաթիլների առաջը չի առնվում, միախառնվելով հեղեղ կարող է դառնալ:

Մենք աշխատեցինք տպավորություններով տալ Վաղարշապատի բամբակահավաքի ֆրոնտի պատկերը: Վաղարշապատը դեռ հետ է մնում: Հնարավո՞ր է, որ նա պլանը կատարի: Անպայման հնարավոր է. դրան ապացույց այն գյուղերի օրինակը, որոնք առաջ են անցել հարվածային կարգով: Ուրեմն հարվածայնությունը, սոցմրցումը, դանդաղկոտության հարվածումը կարող են ապահովել վճռական բեկումը: Պետք են ավելի վճռական միջոցներ տեմպն արագացնելու: Պետք է մեխը խփելիս պինդ ամրացնել: Պետք է գյուղերն այցելելիս արագ վերակազմել եղած դրությունը և հսկել կատարմանը:

***

Մենք չտվինք թվերը: Դա մի քիչ դժվար է, աչքի առաջ ունենալով, որ ընդհանուր թվերն արդեն տրվում են լրագրերում: Եվ եթե տեղական թվերը հետաքրքիր են իրենց շատ բնորոշիչ հատկություններով, բայց մյուս կողմից էլ շատ են բազմատեսակ և մանրամասն, արժանի և հարմար ընդարձակ ուսումնասիրության:

Մնում է ընդհանուր տպավորությունը, որ պիտի ասել առաջին հայացքից բացասական է:

Մենք կանցնենք ուրիշ գյուղեր ևս: Թերևս այնտեղ էլ ցույց տանք կամպանիայի բացասական տպավորությունը: Բայց կզգուշացնեինք սխալ եզրակացություններ անելուց պլանների ռեալականության և կատարման մասին:

ԲԱՄԲԱԿԻ ՖՐՈՆՏՈՒՄ

(Էջ 111)

Առաջին անգամ տպագրվել է ԽՀ, 1931, № 264: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է նույնից: